միայն վանքի շինության մոտավոր թվականը վորոշել Ապաղայի (1265—1282) և Հակոբ Ա. կաթուղիկոսի (1268—1287) ժամանակներով, յեթե բարեբաղդաբար մի այլ տեղ պահված չլիներ իսկական թվականը. գմբեթի թմբուկի հարավային կողմը՝ մագիլների մեջ խոյ բռնած արծվի բարձրաքանդակի չորս անկյուններում, «Թ. Ձ. Ի. Բ» (1273) տառերը. առաջինները վերին՝ իսկ վերջին յերկուսը ներքևի անկյուններում. այս թվականը չունի վոչ Ջալալյան և վոչ Ալիշան, այլ միայն Բաշբերունի և Սիսով (տ. պատկ. 47)*։

Արձանագրության մեջ տաճարի շինության համար ասված է «յարիական և քաջատոհմ յիշխանութե Պռոշոյ եւ որդոյն Պապաքին, Հասանա, մանկան Էաչոյ շինեցաւ սբ եկեղեցիս ի բնակարան փառացն այ (աստուծոյ) եւ յարկ սրբոյն Ստեփանայ»։ Արձանագրությունը հաստատում են «մեք պարոնայքս եւ միաբանքս»։ Այստեղ վորոշակի չի ասված, թե յեկեղեցու շինողը Պռոշն է յուր վորդիների հետ, բայց անկասկած է, վոր մեծ ոժանդակողն է. տաճարը շինված է «յերկար կենդանութի պարոնացն» և սահմանված է Աստվածածնի փոխմանը յերեք որ «մեծ պարոնին մերոյ Պռոշայ»։ Տաճարը շինված է, ուրեմն վորպես «յար՛կ» ս. Ստեփանոսի» և մեծարանք տոհմի նահապետ Պռոշի համար։ Նորա յերկու վորդիները Պապաք և Հասան հայտնի են մեզ արդեն առաջուց. մանուկ Էաչին Պռոշի թոռն է, Հասանի վորդին, վոր միակ ժառանգը լինելով, հիշատակված է այստեղ. կրկին անգամ սույն վանքի Խութլու բեկի և ապա Մարտիրոս գյուղի վիմափոր յեկեղեցու արձանագրությունների մեջ՝ Պռոշի և վորդիների հետ։ Ջալալյան և Բաշբերունին սխալմամբ նորան Պռոշի վորդիների շարքում են դասում, տեղիք տալով յերկու Էաչիների գոյության. մենք առիթ կունենանք այս խնդիրը պարզելու, յերբ հատուկ գլխով նորա մասին կխոսենք։

* Գմբեթի վերա կամ յեկեղեցու ճակատին շինության թվականը նշանակելու սովորությունը հազվագյուտ չէ մեր յեկեղեցական ճարտարապետության մեջ միջին դարերում, ինչպես Վայոց ձորում Սպիտակավոր Աստվածածնի արևմտյան ճակատին ՉՀ. վոր դարձյալ Պռոշյանների շենք է. Հերհերի նորագույն մատրան արևմտյան ճակատին ՉԼԱ., Շահունեցի իշխանների գործ. Կոտայքի Գյուղ Բիլլիայի արևմտյան ճակատին ՉՂԸ։

Որբելյանը ԼԱ. գլխի մեջ նկարագրելով Ստեփանոս Սյունեցու մահն ու թաղումը Թանատի վանքում, ավելացնում է. «եւ շինեալ ի վերայ փոքրիկ մատուռ մի. զոր յետոյ յ728 (ՉԻԸ) թվականին շինեցին բնակիչք տեղւոյն եկեղեցի գմբեթայարկ, գեղեցիկ յօրինուածովք, և եդին զտապան սրբոյն ի հիմն նորա»**։ Որբելյանի այս հակիրճ նկարագրությունը միանգամայն հարմար է գալիս վոչ միայն ներկա շինության արտաքին կողմին, այլ և արձանագրություններին, վո-



Պռոշի վիմափոր տաճարի բեմի ճակատին ձախ կողմից. **Պատկեր 40.**

** Ստեփանոս Սյունեցու վկայաբանությունը Որբելեանի պատմության խմբագրությամբ անցել է Յայսմավուրքի մեջ (Ձեռ. Ն. Յ. № 1005). միայն այստեղ թվականը ՉԻԹ. է. բայց կա Մխիթար Այրիվանեցու գրած վկայաբանությունը պատմական—մատենագրական կարևոր տեղեկություններով, նույնպես անցած Յայսմաւուրքի մեջ, վորից մի քանի կտոր առել ենք մեր այս աշխատության մեջ։ Յերկու հեղինակներն էլ ոգտվել են մի յերրորդ աղբյուրից, վոր դեռ ևս գտնված չէ։